

ՄԻՔԱՅԵԼ ԿՅՈՒՐՃՅԱՆԻ ՆՐՔԻՄԱՆՔԸ

Զ. Ն. ԳԵՎԱՐԴՅԱՆ

Արևմտահայ գրող Միքայել Կյուրճյանը (1879—1965) իր ստեղծագործական ավելի քան վաթսունհինգ տարիների ընթացքում գրել է երգիծական վեպեր, պատմվածքներ, թատերգություններ, բանաստեղծություններ, գրաքննադատական ու հասարակական-քաղաքական բնույթի բազմաթիվ հոդվածներ։ Նա գրականության մեջ մուտք գործեց անցյալ դարի վերջալույսին իբրև կրտսեր գրչակից արևմտահայ ուսուցչական դպրոցի ականավոր գրողների՝ Դ. Զոհրապի, Տ. Կամսարականի, Երուխանի, Ա. Չոպանյանի և տարեկիցը Տ. Ջրաքյանի, Օ. Զիֆթև-Սարաֆի, Վ. Թեքեյանի, Ե. Օտյանի, Ա. Գարթևանի։

Միքայել Սահակի Կյուրճյանը ծնվել է Կ. Պոլսում։ Սկզբնական կրթությունն ստացել է Պերպերյան վարժարանում։ Ուսումնառության տարիներին սովորելով Ֆրանսերեն, նա իր առաջին գրական փորձերը կատարում է «Ռոմանարի լեզվով»։ Նյութական անմխիթար վիճակը ծանր ազդեցություն է թողել պատանի Միքայելի վրա։ Նա երազում էր «անոթութենե շմենելու շափ» գրամունենալ, որպեսզի կարողանար ղբաղվել միայն գրական աշխատանքով։

Մ. Կյուրճյանը պատանեկան հասակից տարվում է Լթոնդ դը Լիլի, Շառլ Բոդլերի, Ալֆրեդ դը Մյուսեի և պառնասական մյուս բանաստեղծների թափածոտ երգերով։

Մ. Կյուրճյանի գրական գործունեության սկիզբը համընկավ 1896 թ. հայկական ջարդերին։ Նա ստիպված եղավ թողնել ծննդավայրը և ապաստանել Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքում, որտեղ և ապրեց մինչև իր կյանքի վերջը։ Ֆրանսերենի իմացությունը Կյուրճյանին հնարավորություն է տալիս աշխատանքի անցնելու Ալեքսանդրիայի Օսմանյան բանկում։

Ալեքսանդրիայում հաստատվելուց հետո Մ. Կյուրճյանը տարբեր ազգերի ֆրանսախոս բարեկամների հետ միասին հրատարակում է «Էթիֆի է Լ'Օրիան» թերթը, որտեղ և լույս են տեսնում նրա առաջին բանաստեղծություններն ու պատմվածքները։

Լոնդոնում Լևոն Բաշալյանի խմբագրությամբ լույս տեսնող «Նոր կյանք» հանդեսի համարներում (1898, № 9—24, 1899, № 3, 5, 6) տպագրվում է Մ. Կյուրճյանի «Մարտիկ աղա» երգիծավեպը։ Այնուհետև նա աշխատակցում է Երվանդ Օտյանի «Ազատ բեմ» շաբաթաթերթին, իսկ 1904 թ. դառնում նրա խմբագրապետը։ Վահան Թեքեյանի հետ 1905 թ. Կյուրճյանը հրատարակում է «Շիրակ» գրական ամսագիրը, որի հիմնական նպատակն էր ոչ միայն կուտորածների հետևանքով լռած գրականությունն իր հին, առողջ արմատների վրա վերածաղկեցնել, այլև «ձանչցնել ազգի մը իր բոլոր արգավանդ ուժերը, իր ստեղծագործ տարրերը և տարածիչը ըլլալ ընդափարին, որ լավագույնն է՝ ազգը կը պատրաստե»¹։

¹ «Շիրակ», գրական ամսագիր, Ալեքսանդրիա, 1905, № 1, էջ 1։

«Երրակի» էջերում են հրատարակվում Մ. Կյուրճյանի «Տրդատ և Տաւատ», «Պարոն կալվածատերը», «Նոր լաթ» պատմվածքները, «Տուրքը» թատերախաղը, «Աշուն», «Միստիք հայելի», «Հաց» բանաստեղծությունները, ինչպես նաև մի շարք քննադատական ու երգիծական հոդվածներ։ Մ. Կյուրճյանը գործածել է բազմաթիվ կեղծանուններ՝ Դիտակ, Հրանտ, Զարմայր Սահակյան, Համշիրակ Ա, Զարմայր, Արսեն Մոլոր, Պետրոս Ազաթան, Մեն Կեն, Մխիթար Պոնտացի, Պարույր, Սրճեփ Ա, Քանդակ, Պոնդ, Ե. Մ. Կյուրոտ (վերջինս Ե. Օտյանի հետ միասին)։ Նա աշխատակցել է բազմադաճ թերթերի ու ամսագրերի՝ «Ազատ բեմ» (Ալեքսանդրիա), «Այսօր-ապագա» (Փարիզ), «Արև» (Կահիրե), «Արև» (Ալեքսանդրիա) և այլն։

Մ. Կյուրճյանը ջերմորեն կապված էր սովետական հայրենիքի հետ, բարձր էր գնահատում նրա ձեռք բերած տնտեսական ու մշակութային նվաճումները։ Նա վաղուց էր երազում ունենալ հզոր, լուսավոր ու ազատ հայրենիք, որը հեռու լիներ կեղծ բարերարներից ու բարեկամներից։ Վերջապես այդ երազն իրականացավ, և զրոզն իր հոգու ողջ էությունը փարվեց հայրենիքին։ «Մեր նոր երազը, — հրճվանքով գրում է գրողը, — իրեն հող ունի այսօրվան Հայաստանին իրականությունը։ Այս հաստատուն դեանին վրա է որ հալ ազդը սկսած է արդեն կառուցանել իր երազին շենքը։ Ապագա, մեծ, բնորոշված, շքեղ Հայաստանը²։ Հայրենագրկությունը խիստ կերպով ճնշել է նրան, հոգեկան անհուն տառապանք պատճառել։ «Իմ քամբախտ սիրունդ և հաջորդներն ալ ճանշցան հայրենագրկության բոլոր ցավերը և դառնությունները։ Եվ երբ այսօր ունինք հայրենիք մը, զեղեցիկ և արի, ապառնիք աճումներով ու նվաճումներով խոստումնալից, շատ ուշ է, ավաղ, մեզի, տարիքը առած և շատ բան վրա տված հայերուս համար։ Մեզի կը մնա հրճվիլ միայն դիտելով հեռուեն...»³։

Միայն ի Կյուրճյանի ստեղծագործությունն արևմտահայ ուսուցիչական արձակի ընդհանուր շղթայի օղակներից մեկն է։ Նա ոչ միայն արձակագիր ու բանաստեղծ էր, այլև երգիծաբան, որն իր համեստ տեղն է գրավում հալ գրականության մեջ։ Կյուրճյանի երգիծանքը արտահայտում է դեմոկրատական խավերի ժխտական, ծաղրական վերաբերմունքը ապականված իրականության նկատմամբ։ Իր գրական ու հասարակական գործունեության ընթացքում Կյուրճյանը պայքարել է թուրքական բռնապետության, հվրոպական դիվանագիտության երկերեսանիության, անտարբերության, հայ ազգայնական կուսակցությունների արկածախնդրական գործունեության դեմ։

Անցյալ դարի վերջին տասնամյակից սկսվում է արևմտահայ թատրոնի լճացման շրջանը, որը խիստ կերպով մտահոգում էր հայ գրողներին։ Արևմտահայ սոցիալական ուսուցիչական ինքնուրույն թատերախաղերի ստեղծումը հուսալի միջոց կդառնար միայն արևմտահվրոպական թատերախաղերով հալ թատրոնը սնելու դեմ։ Մ. Կյուրճյանը գրում է մի շարք կատակերգություններ, թատերախաղեր։

Իր քննադատական հոդվածներում նա պահանջում էր, որ գրականությունը կապվի հասարակական կյանքին, ծառայի ժողովրդի ճաշակի բարձ-

2 «Արև», Կահիրե, 1947, 29 նոյեմբերի։

3 Նույն տեղում, 1946, 16 փետրվարի։

րացման գործին, ունենա նշանակալից բովանդակություն, արձագանքի կյանքի հրատապ հարցերին:

Մ. Կյուրճյանը դրական քննադատությունը համարում է ոչ միայն մտավոր ու բանական բարձր կարողություններ, լայն ու գիտական աշխարհայացք պահանջող դժվարին գիտություն, այլև՝ ճշմարիտ արվեստ: Նա հակադրվում է այն արվեստագետներին, որոնց տեսակետի համաձայն արվեստը դժվար է, քննադատությունը՝ հեշտ⁴:

Մ. Կյուրճյանի թողած դրական ժառանգության մեջ այս կամ այն չափով արտացոլված են հայ վյանքի տարբեր կողմերը: Ինչպես վերը նշեցինք, լոնդոնում 1898—1899 թթ. «Նոր կյանք» հանդեսում լույս է տեսնում Մ. Կյուրճյանի առաջին մեծածավալ ստեղծագործությունը՝ «Մարտիկ աղա» երգիծավեպում հեղինակը խորամուխ է լինում կյանքի երևույթների էության մեջ, փորձում թափանցել նրանց խորքերը, հայտնաբերել հասարակական կյանքում ստեղծված նոր գոյավիճակը, կերտել հեղափոխության մակաբույծների կերպարներ և ձգտում է պատասխանել արդիականության այն հարցերին, որոնք արդեն հասունացել ու հասարակական լուծում էին պահանջում: Դեռևս վեպի լույս ընծայման ընթացքում իրարանցում է սկսվում Ալեքսանդրիայի հալուսյան շրջանում, քանի որ նրա բոլոր հերոսներն առնված էին Ալեքսանդրիայի իրական կյանքից: Օտյանն իր հուշերում վեպի լույս ընծայման մասին գրում է. «Ահռելի փոթորիկ մը փրթավ քաղաքին մեջ: Տուները, սրճարանները, զբոսավայրերը, ամեն մարդ «Մարտիկ աղա»-ով կը զբաղեր: Անոնք, որ տակավին վեպին մեջ չէին երևցած, սրտատրոփ կը սպասեին իրենց կարգին, արդեն իսկ ծաղրվածները կը ջանային իրենք զիրենք մխիթարել ըսելով՝ մենք մեզ կարգը անցուցինք: Եվ սակայն ոչ մեկը կը ներեր Պարույրին՝ որուն ով ըլլալը սակայն չէին գիտեր»⁵: Արվում են զանազան ենթադրություններ Պարույր կեղծանվան տակ թաքնված հեղինակի մասին: Կասկածում են Արփիարյանին, Կամսարականին, Օտյանին: Վեպի հետագա հատվածներն էլ ավելի են սրում հետաքրքրությունը: Հետագայում պարզվում է զաղտնիքը, հայտնի դառնում, որ «Մարտիկ աղայի» հեղինակը բոլորովին նորահայտ երգիծաբան, քսանամյա երիտասարդ Միքայել Կյուրճյանն է:

Հեղինակը ցայտունորեն է վերարտադրել երիտահայ գաղթականության կյանքը, նրանց հայրենագրկությունն ու ողբերգությունը, տխրությունն ու ուրախությունը, առօրյա հոգսերը, դրանք զուգակցելով մարդկային բնավորությունների ու կենսական իրադրությունների ճշմարտացի վերարտադրմամբ: Կյուրճյանը ժողովրդի ծանր վիճակն արտացոլող հատվածներում վայր է դնում երգիծողի իր խարաղանը և ցաված սրտով նկարագրում նրա կյանքը: Հեղինակը չի սահմանափակվում կյանքի միակողմանի պատկերմամբ, նրան զբաղեցնում է ոչ միայն հայրենիքից օտար ափեր հանգրվանած հասարակ ժողովրդի, այլև հարուստների, վերնախավի վիճակը: Կյուրճյանի սատիրան դառնում է անողոր ու ոչնչացնող, երբ կերտում է գեղեցիկ ու պլրոդ տիկին Պելլեբյանի ու նրա դստեր, Սարգիս հապառաճյանի ու նրա

⁴ «Երկրակ», գրական ամսագիր, Ալեքսանդրիա, 1905, № 2, էջ 147:

⁵ Ե. Օտյան, Երկերի ժողովածու, հատ. 4, Երևան, 1962, էջ 133:

կնոջ, Արամ Սեղբոսյանի, տեր և տիկին Գրիգորյանների և այլ կերպարների: Առանց խնայելու որևէ մեկին, Պարույրը պատկերում է «հայ ընտրանուն», որը բաղմելով սոցիալական բարձր աստիճանին, արհամարհանքով է նայում աշխատավոր մարդուն: Ահա երեկույթի առաջին հլուրը. «Պոլսեցի հարուստ վաճառական Սարգիս էֆ. հապառաճյանը և իր կինը: Շատ հարմար լծված գույզ մը: Մարդը կարճահասակ, գիրուկ, խոշոր լեռնուտ գլուխ մը, ժայռի պես համառ ճակատ, հաստ, ինկնող պեխեր, կոր քիթ, խուպուտ, պարարտ ձայնին ելեէջներուն, մարմնին շարժումներուն՝ ձևերուն մեջ որոճացող կենդանիներու դանդաղութենեն, պինդգլուխութենեն, կոշտութենեն ինչ որ բնի մը. արդեն գլուխը մխրճած էր լայն ու ծայրացից ուսերուն մեջտեղ, հիշեցնելով եզի մը գլուխը՝ համբերեր իր լուծին առաջ, որուն իր ուսերը շրջագիծը կր ձևացնեն»⁶:

Կերպարների արտաքինը նկարագրելիս երգիծաբանը մի քանի նրբազգեստով պատկերում է նաև նրանց բարոյական աշխարհի սնանկությունը, պոռոտախոսությունը, հավակնոտությունը, մեծամտությունը: Կյուրճյանը կերտում է երգիծական տիպերի մի ողջ պատկերասրահ: Վեպում արտացոլված են վերնախավի նոր ձևեր բերած սովորությունները, բարքերը: Նրանք նորամուծություններ են մտցրել իրենց նախկին բարքերի մեջ՝ ամեն ինչ ձևելով եվրոպականի օրինակով, նրան հարմարեցնելով: Գրական լեզվով խոսելը դարձել էր մոդայիկ, սակայն շատերի համար այդ ուղղությամբ թափած ջանքերն անհաջողությամբ էին պսակվում՝ լեզվին շտրպապետելու պատճառով: Այդ փոփոխությամբ նրանք պարտական էին Փարիզին, քանի որ այնտեղ գրական ֆրանսերենը դարձել էր խիստ կարևոր ու պարտադիր սալոնների հաճախորդների, վերնախավի համար, ուստի, ընդօրինակելով ֆրանսիացիներին, հայ վերնախավի տիկնայք ու պարոնները փորձում են խոսել իրենց չգիտցած լեզվով: Պոլիսյան «աղաները» փոխվել էին «էֆենտիների», «հանրմները»՝ «տիկինների», ֆեսերը՝ գլխարկների:

Ժխտելով հայ վերնախավի բռնած դիրքը, դատապարտելով նրա քայրանտարբերությունը ազգային ողբերգության նկատմամբ, ղեխ ու շվաշտ կյանքը՝ գրողը ձգտում է ճանապարհ հարթել ժողովրդի լավագույն զավակների համար: Կյուրճյանը հանդես է գալիս որպես ժողովրդի զգացումների թարգման, նրա քննադատական, ժխտական տրամադրությունների արտահայտիչ: Իրական դեպքերն ու փաստերը նոր կյանք են առնում Կյուրճյանի գրչի տակ:

Մարտիկ աղան, որի անունով կոչվում է երգիծավեպը, գլխավոր կերպարն է: Նա Պոլսի մեծահարուստ վաճառականներից մեկն է: Հպարտ ցուցամուր վաճառականը «հեղափոխականի» անունը դարձնում է փառքի, կեղծ հայրենասիրության, պատվանուն ու հարստություն. ձեռք բերելու միջոց: Երգիծաբանը խտացնում է գլխավոր կերպարի բնավորության գծերը, ընդգծում նրա դոգոզամտությունը, ինքնավստահությունը, մեծամոլությունը, հավակնոտությունը: Որքան աճում է Մարտիկ աղայի նախվությունը, նույնքան մեծանում է նրա պարծենկոտությունը: Վեպի այս մասերում կոմիզմն առաջանում է նրանից, որ Մարտիկ աղան կարծում է, թե ինքը խելացի է, ինքնուրույն, մինչդեռ Սուրյանը նրա քից բռնած պտտեղնում է ուղածի պես: Երի-

6 ԳԱԹ, Մ. Կյուրճյանի արխիվ, ֆոնդ № 33, էջ 17:

տասարդ հրգիծաբանը երկու իրար հակադիր իրականությունից ստեղծել է կոմիկական համագործակցություն. Մարտիկ աղան անհամբեր սպասում էր, որ «Ազատ Հայաստանում» բարձր պաշտոններ, պատիվներ կստանա, կհարուստանա առավել շատ, անժուր, որպես հերոսի, հայոց պատմության մատյաններում կգրվի, արձանը հասարակական վայրերում կգրվի, բայց հանկարծ ստանում է Սուրյանի նամակը. «Վաղ անցիր այդ քու երազներեդ, հեղափոխության պոչը ձեռք, նորեն քու առջի կարծիքներուդ դարձիր, բոլոր բաժներս սուտ էին, դիրք մը ստեղծելու, իմ բախտս շինելու համար ստիպվեցա խաբել ու շահագործել, հիմա կու դամ քենե ներում խնդրել, մոռցիր ատ բաները»։ Մարտիկ աղայի հույսերը հօգս են ցնդում, սպասածին հակառակ, նա կորցնում է ամեն ինչ։

Երգիծական տաղանդով է կերտված Սուրյանի կերպարը, նա դաշնակցական կոմիտեի ներկայացուցիչն է Ալեքսանդրիայում։ Սուրյանը հմտությամբ է կարողանում օգտվել իր ունեցած դիրքից ու զբաղվել դրամաշորթությամբ։ Սուրյանի կերպարը շատ կողմերով հոգեհարազատ է Նար-Դոսի Սուրեն Բաղենյանին («Մահը»), որը նույնպես ժողովրդի նվիրական զգացումները շահագործող, ստորաբարձ բախտախնդիրներից մեկն է։ Սուրյանի ողջ գործունեությունը խոսքի ու գործի հակասության լավ օրինակ է։ Քաղաքական այդ բախտախնդիրը ճկունորեն կարողանում է օգտվել հանգամանքներից։ Հեղինակը Սուրյանի վարքագիծը ներկայացնում է որպես ժամանակի անմարդկային պայմանների արգասիք։

Երգիծաբանն իր գլխավոր կերպարների գործունեության դատապարտման ու ժխտման միջոցով բացահայտում է իր դրական ու քաղաքական դավանանքը։ Կյուրճյանն անարգանքի սյունին է գամում սուրյաններին ու մարտիկ աղաներին, ժողովրդի ուշադրությունը բեռնում հասարակական արատավոր երևույթների վրա։ Բացասական կերպարների եսասիրական, հակամարդկային արարքների միջոցով Կյուրճյանն ատելության զգացումներ է առաջացնում նրանց նկատմամբ։ Նա առաջ է քաշում հայ ազգը մյուս ազգերից մեկուսացնողների, անջատ շարժման գաղափարախոսների դեմ պայքարի հարցը։ Հենց դրանով էլ նա առաջ է քաշում բոլոր ճնշված ժողովուրդների համատեղ պայքարի դադափարը։

Մ. Կյուրճյանը ծաղրում, դատապարտում է այն երևույթը, որ շահամուտ արկածախնդիրները, իրենց հույսկելով ազատագրական շարժման ղեկավարներ, հանցավոր գործունեությամբ ջլատում են պայքարի ուժերը, վարկաբեկում ժողովրդի ծոցից դուրս եկած իսկապես ազնիվ ու անձնուրաց մարտնչողներին։

Երգիծաբանը երբեք չի դադարում հասարակական շարիքի դեմ պայքարելուց։ Այդ նպատակով նա մերթ վեպ ու վիպակ է գրում, մերթ էլ պատմեցվածք ու հոգված։ Եվ կարևորն այն է, որ բոլոր գործերում էլ իշխում է անզիջում պայքարը։ Նա իր բազմաթանր հրգիծանքով հաճախակի է անդրադարձնում կուսակցությունների ու նրանց անդամների գործունեության զանազան կողմերի բացահայտմանը։ «Գիսավորին դիշերը» դավեշտում սարկազմով է պատկերված Շանթ Կոտոշունու մեծամտությունը, «ամենազորությունը», չնչինությունը։ Զավիշտի գլխավոր կերպարը՝ Կոտոշունին, իրենից ոչինչ չի

ներկայացնում, ողորմելի անձնավորություն է, սակայն չի գիտակցում իր ոչնչությունը, փորձում է «կովել» «գիսավորին դեմ»: Իրեն դավաճանած կնոջ խոստովանությունը լսելուց հետո զայրանում է և, կամենալով խայտառակ դրությունից դուրս գալու ելք գտնել, ավելի անհեթեթ բան է ասում ու ընկնում ծիծաղելի դրության մեջ. «Ջիս խարել և այն ալ տերտերին տղուն հետ... ստոր շերիաթճիի մը, գծուծ բրովակաթորի մը հետ... գոնե դաշնակցական րլլար...»⁸:

«Անմահն սեփականություն» զավեշտն ամբողջությամբ խոսքի և գործի հակադրության սկզբունքով է ստեղծված: Հեղինակն այս անգամ ծաղրում է «հեղափոխական» ղեկավար ու թատերադիր Հմայակ Ալամյանցին, ուր միտինգում կրակոտ ճառ է արտասանում սեփականության մասին՝ այն համարելով «կազմակերպված ու լեզալ» զոդություն, ցած ու ստոր բնազդ, «գոռացող անարդարություն» և այլն, բայց երբ լսում է, որ իր բեմադրությունը ներկայացրել են առանց հոնորարի, զայրացած գոռում է. «Նոքա իմ անկապտելի, իմ օրինական, իմ նվիրական սեփականությունն են... Գոդություն է իմ արդար աշխատանքի արդյունքը. գրպանել... Ես կը բողոքեմ...»⁹:

1908 թ. վերջերին Մ. Կյուրճյանը և Ն. Օտյանը գրում են «Հերոսախաղ» զավեշտը, որտեղ խիստ ծաղրի են ենթարկում նոր տարածվող երևույթը՝ «հերոսախաղությունը»: Զավեշտի հերոսները չնչին ու ողորմելի մարդիկ են, որոնք հայրենի հողից դուրս շարժվելուց հետո անցել են երկար ճանապարհ, մաս առ մաս կորցնելով իրենց ազգային ու մարդկային արժանապատվությունը: Օտարի հացը նրանց հոգին կարծրացրել է, զրկել խղճից, հոգեկան ու բարոյական բարձր հատկանիշներից և ի վերջո դարձրել, հերոսի բառերով ասած, «թափոն օսմանցի»: Անհաշտ պաշար մղելով այդպիսիների դեմ՝ հեղինակներն իրենց համակրանքն են արտահայտում հայրենիքից հեռու, ապրուստի միջոցներից զուրկ այն հայերի նկատմամբ, որոնք իրենց արժանապատվությունը բարձր պահելով, չեն խաբել, չեն կեղծել, այլ աղնվորեն, իրենց արդար աշխատանքով զոյատեել են, ապա հասել հայրենիք: Այդպիսիների ներկայացուցիչն է երկաթագործ Հուսեփը:

«Հերոսախաղ» զավեշտում ձաղկվում է այն խաբուսիկ ոգևորությունը, որ տիրում էր Թուրքիայում սահմանադրության հռչակումից հետո: Բոլորն օրորվում էին ազատության ու երջանկության հույսերով, թուրք, քուրդ, հայ ու հույն «եղբայրացել էին», սահմանադրությունը բոլորին դարձրել էր «Թուրքիո ազատ քաղաքացիներ»: Նրանք դեռևս անգիտակ էին սոցիալական ողբերգությունը: Սահմանադրությունից ընդամենը մի քանի ամիս անց գրված այս ստեղծագործության մեջ դրսևորվում է հեղինակների անվստահությունը: Նրանք կանխադրում էին, որ այդ ազատությունն օճառի սոցիալակի պիս սնամեջ է:

Մ. Կյուրճյանի սատիրայի սլաքն ուղղված է թուրքական կառավարության քաղաքականության ու նրա վոլմից հռչակված ազատության, եղբայրության, հավասարության կեղծ լուսնոսեղիքի դեմ: Երգիծաբանը սպանիչ ծաղրանքով ցուցադրում է սահմանադրական Թուրքիայի «եղբայր ու հավասար» ժողո-

⁸ «Կառավարություն» երգիծական հանդես, Կ. Պոլիս, 1910, № 22:

⁹ Նույն տեղում:

վուրդների ողբալի վիճակը: Սահմանադրությունից մի տարի անց «Բյուզանդիոն» օրաթերթում «Ձավեշտ տարեցույց» խորագիրը կրող երգիծական շարքում նա գրում է.

«Երկրորդ Կաղանդ եղբայրության, հավասարության, արդարության և ազատության ԲԱՌԱՎՈՐ թվականին:

Ձյուն և կարկուտ կը տեղա առատորեն՝ «եղբայր և հավասար» ցեղերուն (անոնց զորս գիտենք) ալեհեր գլխին:

Հուլիսի գարուններուն, ուրախության ամառներուն ու տերևաթափ: սլառանքներու աշունին հաջորդած է ցուրտ և մռայլ իրականության մը ահավոր ձմեռը:

Սահմանադրական Հավատքի վառելանյութին դինն այնքան վրա կը դնե որ «եղբայր և հավասար» ցեղերը չեն կրնար գնել անկէ և կը մնան առանց սիւսի և ածուխի:

Շատ մը ազգային ակնկալություններ և հույսեր ծանր պոռնշիթե բռնված՝ անկողնու կը ծառայեն, ուրիշները բոլորովին սառած են տիրող ցուրտին:

Ի դուր Թանին ու Թասվիրի էֆենդի օսմ. ցեղերու համերաշխության, միաբանության և սիրաբանության ամենաջերմ հորդորներով կը փորձեն ոգևորել և կենդանացնել զանոնք»¹⁰:

Երգիծաբանը մերկացնում է թուրք կառավարողների երկերեսանիությունը, ցույց տալիս, թե ինչպես մի օր նրանք կեղծավորաբար լաց են լինում իրենց զոհերի գերեզմանների վրա, հաջորդ օրը կազմակերպում նոր ջարդեր. որսիսզի նորից լաց լինեն՝ համոզելու համար իրենց «հայ եղբայրներին» «սիրո և հավատարմության» մեջ: Աղանալի ջարդերը եկան ապացուցելու, որ հայերը ոչ մի լավ բան չեն կարող ակնկալել Թուրքիայից: Թուրքական կառավարությունը որոշում է օգնել ջարդերից հետո կենդանի մնացած, տուն ու տեղ կորցրած աղանացիներին: Կյուրճյանը չի ուշանում պատուելու այն վարագույրը, որի ետևում մարդասպանները թաքցնում էին իրենց դեմքը: «Հունվար 10.— Ատանալի կուսակալ Ճեմալ պեյ կը հեռագրե թե արկածելոց տուններուն շինության պիտի ձեռնարկվի ընդհուպ: Առաջին շինքին առաջին քարը հանդիսավորապես պիտի զետեղվի հառաջիկա շաբթվան սկիզբը: Անձրենները և տեղատարափները կը շարունակեն, գոհություն Աստուծո», — գրում է Կյուրճյանը¹¹:

Երգիծաբանը սարկազմով է մերկացրել նաև եվրոպական տերությունների խարդախ քաղաքականությունը: Այդ առումով բնորոշ է «Պարոն բաղաբագետը» երգիծական պատմվածքը: Եվրոպական տերություններն իրենց ուժի դիրքերից ելնելով՝ ժողովուրդների բախտի հետ են խաղում, համաշխարհային քաղաքականության մեջ կործանարար ազդեցություն թողնում: Գրողը ցույց է տալիս, թե ինչպես անգլիական կառավարությունը «մոգական մատի» մի շարժումով տարբեր ազգություններ է իրար խառնում, տակնուվրա անում, «երկրներ գրպանում»:

Մ. Կյուրճյանի լավագույն գործերի թվին է դասվում Ե. Օտյանի հեղինակակցությամբ գրած «Ֆրանկո-թրքական պատերազմը» կատակերգությունը:

¹⁰ «Բյուզանդիոն», Կ. Պոլիս, 1910, № 4000:

¹¹ Նույն տեղում:

Կատակերգությունը դեռ չավարտած՝ համբավը տարածվում է ողջ գաղութում ու հարաճուն հետաքրքրություն առաջացնում: «Ֆրանկո-թրքական պատերազմը» առաջին անգամ ներկայացվում է Ալեքսանդրիայում, 1903 թ. սեպտեմբերի 13-ին, «Փիրամիտ» ծովեզրյա թատրոնում: Այնուհետև կատակերգությունը լայն տարածում է գտնում, բեմադրվում է Կահիրեում, Կ. Պոլսում, Բաքվում և այլուր: 1957 թ. սփյուռքահայ երաժշտագետ Հ. Փափազյանն այն վերածում է երաժշտական կոմեդիայի ու մեծ հաջողությամբ բեմադրում: Աթենքում: «Ֆրանկո-թրքական պատերազմը» առաջին անգամ Երևանում բեմադրվել է 1962 թ. և ունեցել բացառիկ հաջողություն: Այն բեմադրվել է ավելի քան երկու հարյուր անգամ: Կատակերգությունը բեմադրվել է նաև Լենինականում:

Ե. Օտյանի մահից հետո Մ. Կյուրճյանը դրում է այս կատակերգության երկրորդ մասը՝ «Քսան տարի ետք» կամ «Ֆրանկո-թրքական պատերազմը կը շարունակվի» վերնագրով: Վերջինս չնայած «Ֆրանկո-թրքական պատերազմը» կատակերգության շարունակությունն է, այնուամենայնիվ ունի ինքնուրույնություն և կարող է առանձին ներկայացվել:

«Ֆրանկո-թրքական պատերազմը» կատակերգության մեջ Ե. Օտյանը և Մ. Կյուրճյանը շեշտում են, որ հայ ժողովուրդը ճակատագրի բերումով ցրված է աշխարհի չորս կողմերում, որին հարատևորեն սպառնում է ձուլման վտանգը: Ապրելով օտար երկրում, ենթակա լինելով տվյալ երկրի օրենքներին ու սովորույթներին՝ հայերը ստիպված են լինում կամա թե ակամա սովորելու հյուրընկալող երկրի լեզուն, ծանոթանալու և հրապուրվելու նրա գրականությանը, արվեստով, մշակույթով և այլն: Առաջանում է ասպազայնացման վտանգ: Երգիծաբանները ձգտում են ժողովրդին հեռու պահել ձուլման վտանգից: Կատակերգությունը ոչ միայն դարասկզբի արևմտահայ կյանքի պատկերն է, այլև դրա նկատմամբ հեղինակների ունեցած վերաբերմունքի արտահայտությունը:

«Ֆրանկո-թրքական պատերազմը» կատակերգության գաղափարական էությունն «ալաֆրանկալի» դեմ մղվող պայքարն է: Հետաքրքրական է, որ հայ իրականության մեջ, դեռևս 1862 թ. Խորեն Գալֆայանի գրած «Ալաֆրանկա» թատերախաղում խիստ ծաղրի են ենթարկված վերնախավի օտարամոլությունը, ստրկամիտ հնազանդությունը և վրոպական կենցաղավարության արտաքին ձևերին: Ինչ խոսք, Օտյանի և Կյուրճյանի կատակերգության մեջ «ալաֆրանկալի» դեմ մղվող պայքարը տրված է առավել խորությամբ. կերտված են ցայտուն ու կենդանի կերպարներ: Կատակերգության զլխավոր կերպարներից մեկը տիկ. Եվփիմեն է՝ ֆրանսիական վարք ու բարքի զերին, գաղափարախոսն ու երկրպագուն: Նա դարձել է ազգատյաց, օտարամոլ, արհամարհում է մայրենին, զղվանքով ու քամահրանքով է խոսում ազգային սովորությունների ու բարքերի մասին, հասնում այնտեղ, որ «ամաչում է» հայ ծնված լինելու համար:

Ազգատյացներին հակադրված է Եվփիմեի ամուսինը՝ Արթին աղան: Նա ատում է օտարամոլներին, որոնց այսպես է բնութագրում. «...կնիկվարի մարդեր, զայիֆ զլույիֆ, ծառվընին սխմելու ըլլաս նե, կը վախնաս քի կտորը ծառող պիտի մնա, երկու խաթ ըլլան նե կիտես քի ջրթ տեյի բըրթին պիտի, ամա ինչ է, ուսումնական են եղեր, գոլեճ կացած են եղեր, տիրլումա ունին»

եղեր, ֆրանկսրսճա կիտեն եղեր, կը կարդան, կը գրեն եղեր... զար... զար... դարմացյալ են եղեր... մեղա՛, մեղա՛, զարգացյալ...»¹²։

Հեղինակները ժխտում են թե՛ մոդայամուլներին, թե՛ արթիններին։ Նրանք առաջ են քաշում ներդաշնակ կյանքի առաջամարտիկներին, քանի որ նոր կյանքի կառուցողներ չեն կարող դառնալ ո՛չ մոդայամուլները, ո՛չ էլ պահպանողական հայացքների տեր արթինները։ Հեղինակները դրանց հակադրում են նոր երիտասարդությանը, որի ներկայացուցիչներն են Վարդուկը, Գառնիկը, Տիգրանը, տիկ. Դոհարիկը («Քսան տարի ետքի» կերպարներից)։

Եթե «Ֆրանկո-թրքական պատերազմը» և «Քսան տարի ետք» կատակերդրությունների մեջ հումորի մերկացնող ուժը հասնում է սատիրական ծաղրի մակարդակին, ապա «Առտը իրավ, խենթը խելոք» վիպակում բացահայտ է կարեկցական հումորի առկայությունը։ Այս վիպակը մի քանի անգամ ստեղծագործությունների հետ միասին դառնում է Մ. Կյուրճյանի յուրովի պատասխանը դարասկզբում լայն արձագանք գտած «Վաղվան գրականություն» բանավեճին։ Մ. Կյուրճյանի կարեկցական հումորն իր արտահայտությունն է գտել նաև ժողովրդական կյանքն արտացոլող նրա բազմաթիվ գործերում՝ «Նոր լաթ», «Տրդատ և Տաճատ», «Լուսահոգին», «Մարտ» և այլն։ Գրողը պատկերում է ժողովրդի թշվառ վիճակն ու հոգեկան անապակ աշխարհը՝ շեշտելով աշխատավոր մարդու ողբերգությունը։ Երգիչական հնչեղությամբ աչքի է ընկնում Կյուրճյանի «Հրաշք մը պատմությունը» պատմվածքը, որի գաղափարական նպատակադրումը հարստության կուտակման ստոր միջոցների ցուցադրումն է, հասարակության անարդարացի կառուցվածքի էության բացահայտումը։

Մ. Կյուրճյանի ստեղծագործությունը տոգորված է եղել ժողովրդական տրամադրություններով։ Նա հակառակ է եղել ժամանակի հետադիմական գրական ուղղություններին։ Ժողովրդի ճակատագրով, հասարակական-քաղաքական իրավիճակով խորապես ապրող երգիծաբանը անխոնջ մարտնչել է չարիքի դեմ։

САТИРА МИКАЭЛА КЮРЧЯНА

Дж. Е. ГЕВОРКЯН

(Резюме)

В истории западноармянской реалистической сатиры определенное место занимает творчество драматурга, поэта и публициста Микаэла Кюрчяна (1879—1965). В своих разножанровых произведениях Кюрчян разоблачает турецких деспотов и дипломатическое коварство европейских империалистических государств. Он высмеивает авантюристическую деятельность армянских националистических партий, а также — мещанские нравы и национальный нигилизм богатых слоев западноармянского общества. Кюрчян приветствовал установление Советской власти в Армении и до конца жизни оставался ее верным другом.

12 Ս. Օ տ յ ա ն, Երկերի ժողովածու, հատ. 1, Երևան, 1967, էջ 647։